

ՊՐՆ ԼԱՏԷՆ ԿՐ ԳՏՆՈՒԻ ՓԱՔԻՍՍԱՆ - ԱՅՂԱՆԻՍՍԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳՕՏԻՆ ՄԷՁ

Ուսումնասիրող է եւ հաւանաբար կը գտնուի Փաքիստանի եւ Աֆղանիստանի միջեւ սահմանային գոտիին մէջ, յայտնած է Գերմանիոյ գաղտնի սպասարկութեան արտաքին ցանցի պատասխանատու Օկրուս Վէրմերը:

«Համաձայն մեր տեղեկութիւններուն՝ համոզուած ենք, որ Պրն Լատեն կը գտնուի «Բախտ» ցանցին ղեկավարը, ըսած է ան, աւելցնելով, որ Պրն Լատեն կը շարունակէ «Բախտ» ցանցին ղեկավարը ըլլալը, սակայն կը թուի թէ շատ չի տեղափոխուի:

Ըստ Վէրմերի գնահատումներուն՝ Աֆղանիստանի եւ Փաքիստանի մէջ կան «Բախտ» եւ թալեպան շուրջ 5 հազար հետեւորդներ: Ուրիշներ իրենց երկիրները վերադարձած են, յայտնած է ան:

«Հնիկի համաձայն՝ անոնք նոր յարակուսներ կը պատրաստեն իրենց նոր վայրերէն: «Փրենց կարելի պիտի ընեն դարձեալ հարուածելու համար: Պէտք է պատրաստ ըլլանք», ընդգծած է ան:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՊԱՇԱՐՈՒՄԸ ՊԱՀԵԼ ԱՅՆԵԼ ՀՐԵՆԻ ԳԱՂԹԱԿԱՅԱՆԸ, ՄԻՆՉ ԱՊՈՒ ՕՊԷՅՏԱ ԿՐ ՄՆԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆ

Այնչէլ Հըրուէ գաղթականացի մուտքերուն լիբանանեան բանակին կողմէ կիրարկուած ապահովական խիստ միջոցառումները կը մնան ի գործ: Այս միջոցառումներուն շնորհիւ ձեռքարկուեցան բազմաթիւ կասկածելիներ եւ արդարադատութեան կողմէ հետապնդուած փախստականներ:

Երեք բանակայիններու սպանութեան անդրադարձները դարձան լիբանանեակաղետինեան միացեալ յանձնախումբը Շաբաթ օր Սայտա-յի նահանգապետարանին մէջ գումարեց ժողով մը եւ տուաւ շարք մը որոշումներ:

Պաղեստինեան տարրեր խմբակներու գինեալ տարրերը համախմբող պաղեստինեան «գինեալ պայքար»ը (Բիթան Մուսալլահ) յայտարարեց, որ Այնչէլ Հըրուէի պատասխանատուները «բաց» ժողովի մէջ կը մնան հետեւելու համար այն ճիգերուն, որոնք ի գործ կը դրուին գտնելու, ձեռքարկելու եւ արդարութեան յանձնելու համար երեք բանակայինները սպանած Ապու Օպէյտա (Պատիհ Ուալիտ Համատէ), որ ցարդ կը մնայ փախստական: Կարգ մը աղբիւրներու համաձայն՝ ան նոյնիսկ յաջողած է դուրս սարգելի գաղթականացիներէ:

Պաղեստինեան զանազան խմբաւորումներ երէկ երեկոյեան ժամը 5:30ին սկսան Այնչէլ Հըրուէ գաղթականացիներէ մէջ ժողով մը գումարել եւ քննարկել լիբանանցի երեք բանակայիններու սպանութեան պատասխանատու Պատիհ Ուալիտ Համատէն (Ապու Օպէյտա) ձեռքարկելու ձեռքը:

Աւելի ուշ, պաղեստինեան խմբաւորումները յայտնեցին, որ իրենց անդամները, որոնք տակաւին Ապու Օպէյտայի ձգած հետքերը կամ փաստեր կ'որոնեն, կրցած են չնչին տեղեկութիւններ ձեռք ձգել:

Միւս կողմէ, «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ գաղթականացիներէ մէջ Ֆաթհ շարժումի ղեկավարներէն Մուսա Մաքտաւ ըսած է, որ տեղեկ չէ Ապու Օպէյտայի թաքստոցին եւ վստահ չէ, որ ան արդէն իսկ փախուստ տուած է գաղթականացիներէ:

Սակայն Մաքտաւ ընդգծած է, որ եթէ Ապու Օպէյտա տակաւին Այնչէլ Հըրուէ կը գտնուի, ապա ան անպայման պիտի ձեռքարկուի՝ առանց փամփուշտ մը իսկ կրակելու:

Մինչ այդ լիբանանեան բանակը հարկ եղած միջոցառումները որդեգրած է եւ պաշարած է գաղթականացիները հրասայլերով: Բանակի աղբիւրները նշած են նաեւ, որ Այնչէլ Հըրուէի այս դէպքին թղթածրարը մանրամասնօրէն պիտի քննարկուի այսօր՝ Երկուշաբթի, Ապահովութեան կեդրոնական խորհուրդի ժողովին, որուն պիտի նախագահէ ներքին գործոց

Շարք՝ էջ 10

ՊՈՒՍ ԿԱՐՉԱՊԵՏ ԻՍԱՍ ՖԱՐԷՍ ՏԵՍԱԿՅԵՑԱԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏԻ ՀԵՏ



Նախագահ Ասատ Կ'ընդունի Իսամ Ֆարէսը

Փոխ վարչապետ Իսամ Ֆարէս երէկ Դամասկոսի մէջ հանդիպում մը ունեցաւ Սուրիոյ նախագահ Պաշ-շար Ասատի հետ:

Քննարկուեցան Լիբանան - Սուրիա երկկողմանի յարաբերութիւնները, շրջանին մէջ արձանագրուած նոր գաղափարները եւ անոնց գծով միջազգային թէ շրջանային հակազդեցութիւնները:

Հանդիպումին, Ասատ եւ Ֆարէս շեշտեցին լիբանանեակաղետին յստակ կեցուածքը այս հարցերուն նկատմամբ եւ նկատել տուին նաեւ, որ արաբական նկատմամբ ու յստակ կեցուածք պէտք է ճշդուի՝ միասնակցութեամբ շրջանին սպառնացող բոլոր մարդկային սպառնալիքներուն, զարգացումներուն եւ վտանգներուն:

Յետմիջօրէին Ֆարէս վերադարձաւ Պէյրութ:

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ՝ ՅՈՒՆԻՍ 14Ի ԱՌԻԹՈՎ ԱՐԱՆԴԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՏՈՂԱՆՅՔԻՆ ԸՆԹԱՅՔԻՆ

ՆԱԽԱԳԱՀ ՇԻՐԱՔԻ ՈՒՂՈՒԹԵԱՄՔ՝ ԿՐԱԿՈՑ



Շիրաք՝ զինուորական տողանցքի ընթացքին

Ֆրանսայի անկախութեան տօնին՝ Յունիս 14ի առիթով Շան Գ'ելիզէի վրայ կատարուող տարեկան արարողական զինուորական տողանցքին ընթացքին, երէկ, նախագահ Շիրաք երբ վրան բաց ինքնաշարժով



Նախագահական պահակազուգործի զինուորներ կը ձեռքարկուին յանցագործը

ուշ, երիտասարդը ընդունած է, որ կ'ուզէր սպաննել Շիրաքը՝ փոխելու համար Ֆրանսայի եւ աշխարհի դիմագիրքը:

Միւղղէպը, սակայն, պատճառ չեղաւ, որ տողանցքը յետաձգուի: Անիկ կը շարունակուեցաւ եւ

ԻՍՐԱՅԷԼ ԿԱԶԱՅԻ ՄԷՁ ՕԴԱՆԱԻՈՎ ՓՈՐՁԵՑ ԱՀԱՔԵԿԵԼ ՀԱՄԱՍԻ ՂԵԿԱՎԱՐ ՈՒԱՀԱՊԸ

Իսրայէլեան «Էֆ - 16» տիպի օդանաւ մը երէկ կազախ մէջ ռմբակոծեց ընկերարանը պաղեստինցի պատասխանատուի մը, որ սակայն յաջողած էր տուէնէն դուրս ելլել քանի մը երկվայրկեան առաջ, յայտնեցին պաղեստինցի ակնատեսները:

Ռմբակոծումին թիրախ դարձաւ կազախ մէջ Համասի ղեկավարներէն Եուսէֆ Ապու Ուահապի բնակարանը: Ակնատեսները ըսին, որ հինգ հոգի վիրաւորուած է ռմբակոծումին պատճառով: Ակնատեսները ակնցուցին, որ Ուահապի օդանաւերուն ձայնը լսելով, անմիջապէս դուրս ելած է տուէնէն, որ ամբողջութեամբ քանդուած է: Շուրջ գտնուող չորս շէնքեր եւս վնասուած են: Իսրայէլեան բանակը որեւէ մեկնարանութիւն

ԲԵԹՂԵՀԵՄԻ ՄԷՁ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԲՈՆԱԳՐԱԻՄԸ Է ՀԱՅԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԵՐ

Անցնող քանի մը օրերուն ընթացքին իսրայէլեան բանակը բնագրաւած է Երուսաղէմի հայոց պատրիարքութեան պատկանող հողեր Բեթղեհէմի մէջ, ապահովական ցանկապատ կառուցելու պատրուակով:

Լուրը հաղորդող «Ալ Քուսա» նշեց, որ Այսրորդանանի մէջ իսրայէլեան ուժերու ղեկավար Կոր. Բիցալ Էլթանն է պաշտպանութեան նախարարութեան տնօրէն Կոր. Ամու Եարուն հրապարակած են հրամանագիր մը՝ գրաւելու հայապատկան հողերը:

Պատրիարքարանի փաստաբանը՝ Մալքէ Քուպաթի «Ալ-Քուսա» լրատու է, թէ այս տնօրինումները կը միտին գրաւել պատրիարքարանի կեդրոնատեղիները, որոնք կ'օգտագործուին իբրեւ աղօթարան, եւ վերածել պանոց իսրայէլեան բանակի կեդրոնատեղիներու: Ան նշած է, թէ պատրիարքարանի բարձրաստիճան պատասխանատուները անցնող երկու շաբթուան ընթացքին բազմիցս հաղորդակցութեան մէջ եղած են Իսրայէլի պաշտպանութեան նախարարութեան եւ բանակին հետ, հրապարակուած պիտուրակաւ հրահանգները վերատեսութեան ենթարկելու առաջադրանքով, սակայն ապարդիւն: Քուպաթի ըսած է, թէ երբ բանակցութիւնները որեւէ դրական վարձագումի չեն յանգած, Երուսաղէմի պատրիարքը որոշած է դիմել Իսրայէլի արդարադատութեան բարձրագոյն դատարանին՝ տրուած որոշումներու վերատեսութեան համար, ինչպէս նաեւ որոշած է դիմել տեղական եւ միջազգային հանրային կարծիքին: Մալքէ Քուպաթի նաեւ ընդգծած է պատրիարքարանի բացարձակ մերժումը շրջաններ բաժնող ապահովական ցանկապատի իսրայէլեան ծրագիրին:

ՀԱՅԱԶԳԻ ԱՇԽԱՐՀԱՀՈՉԱԿ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԵՆՈՒՍՈՒՑ ՔԱՐՇ ՈՉ ԵՒՍ Է



Ենուսիֆ Քարշ

Հայազգի աշխարհառջակ լուսանկարիչ Ենուսիֆ Քարշ Շաբաթ օր մահացած է Պոսթըմի մէկ հիւանդանոցին մէջ: Ան 93 տարեկան էր:

Քարշ միջազգային ճանաչում ձեռք ձգած է յատկապէս 1941ին՝ Քրիտանիոյ վարչապետ Ուինսթըն Չըրչիլի լուսանկարով, որմէ ետք ան նկարած է 20րդ դարու բացառաբար հանրածանօթ անձնաւորութիւններ, ինչպէս՝ Ֆիտլի Քասթրօ, Էրնէսթ Հեմինգուեյ, Շոն Էֆ. Քեմսթի, Ալլապրօ Այնշթայն, Համֆրի Պոկարթ, Փապիօ Փիլիպսօ եւ Պիլ Քլիմօնթ: Հետաքրքրական է այն, որ Չըրչիլի նկարը առաջինն է, ուր ան իր հոշակաւոր սիկառով չէ:

«Նկարագիրը, լուսանկարի մը գման, մութին մէջ կը զարգանայ», ըսած է ան:

Քարշ ծնած է 1908ին: Ան Քանաթա գաղթած է 1924ին եւ 1936ին իսկ սկսած է անձնաւորութիւններ լուսանկարել:

Շարք՝ էջ 10

ԼՕՒԻ ՊԱՏՏԱՄԱԻՈՐԱԿԱՆ 47ՐԴ ԺՈՂՈՎԻ ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՓԱԿՈՒՄ

Երեկ, Կիրակի 14 Յուլիսի երեկոյան ժամը 8:00ին, իր աւարտին հասաւ երեք օրերու վրայ երկարած ԼՕՒԻ պատգամաւորական 47րդ ժողովը:

2000 - Յուլիս 2002ի երկամեայ լայնածաւալ ու համապարփակ նիւթաբարոյական գործունէութեան տեղեկագիրը: Անկազմ ընթացքով վարչութեան աշխատանքներու ամբողջական թղթածրարը, իրականացուցած ծրագրերը:

Գուցած ծրագրերը՝ կազմակերպչական, առողջապահական, ընկերային, կրթական, քարոզչական եւ այլ աշխատանքներու մարզերէն ներս, 11էն 15 Մարտին Աթէնքի մէջ կայացած Համահայկական 67րդ պատգամաւորական ժողովի զեկուցումը, 14 յանձնարարներու գործունէութիւնը, «Արաքսի Պուլճուրճեան» ընկերարազմակերպչական կեդրոնին կեանքը, եւ վերջապէս՝ Լիբանանի մէջ գործող 26 մասնաճիւղերու պարզած պատկերը եւ անոնց աշխատանքները:

Այս տեղի ունեցաւ բանաձեւում եւ ներկայները գոհացուցիչ նկատեցին տարած գործունէութիւնը, գրեթէ բոլոր բնագաւառներէն ներս:

Այս ներկայ ԼՕՒԻ կանները լուսարանական հարցումներ ուղղեցին, անջատարար քննարկուեցաւ իւրաքանչիւր բաժնումը եւ առաջարկներ ներկայացուցան յառաջիկայ երկամեայ գործունէութեան մասին: Անոնք յատկապէս կը վերաբերէին անդամարշաւի, կրթական մարզին եւ ԼՕՒԻ կատարած օժանդակութիւններուն, «Աղթամար» արդիւնաբերական կեդրոնին եւ անոր աշխատանքներու աշխուժացման, աւելի արդիական ձեւերով քարոզչութեան իրագործման եւ այլ մարզերու վերաբերող հարցերու:

Կիրակի, երեկոյան ժամը 5:00ին, տեղի ունեցաւ զոց բուհարկութիւն եւ ժողովին մասնակցողները ընտրեցին իրենց նոր Շրջանային վարչութիւնը:

Ժողովին փակումը կատարեց ՀՕՄԻ Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ Հեյն Մերճանեան, որ ըսաւ, թէ անդամներուն կողմէ ընտրուած այս նորընտիր կազմին պէտք է վստահել, նեցուկ կանգնել եւ ամէն ձեւով օժանդակել աշխատանքներու յաջողութեան:

Ան յաջողութիւն, մեծ ուժ եւ կորով մաղթեց նորընտիր վարչութեան:

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

13 Յուլիսի տեղական մամուլը գլխաւորաբար լուսարձակի տակ առած է Այնէլ Հըլուէի գաղթականին մօտ իրանացի երեք սպանութիւնը, Սայտայի մէջ պաղեստինեան գաղթականի մուտքին իրանացեան բանակի ուժերու կուտակումը, այդ վայրերուն մէջ առնուած ապահովական խիստ միջոցառումները, տեղի ունեցած անցուդարները եւ վանապան անձնաւորութիւններու կազմակերպութիւնները կողմէ այդ դէպքին դատաւարտումը:

«Պայրաք» այս մասին գրած է, Լիբանանեան բանակը կը պահանջէ այսօր իրեն յանձնել երեք բանակայինները սպանած Ապու Օպէյտան. նախագահ Լահուտ կը յայտարարէ. Պիտի չարտօնէք, որ բնակարանային շրջաններ ոճրագործներու ապաստարանի վերածուին: Պաղեստինեան ղեկավարութիւնը դատաւարտեց բանակայիններու սպանութիւնը եւ մերժեց, որ գաղթականները դատաւարտեցին:

Ըստ «Լիուա»ի, Սայտայի քաղաքական անձնաւորութիւնները կը դատաւարտեն երեք բանակայիններու սպանութիւնը, իսկ Այնէլ Հըլուէի գաղթականին պատասխանատուները բանակին հետ կը գործակցին յանցանքները ձեռք բերելու համար: «Տիար» նշած է, թէ բանակը Այնէլ Հըլուէի պատասխանատուներուն պայմանաւճարմանը ճշդեց եւ ամբողջ շրջանը խիստ շրջափակումի մէջ առաւ:

«Սաֆիր» գրած է, երեք բանակայիններու ոճրագործին մասին տրուած տեղեկութիւնները կ'ըսեն, որ ան իրանացի է, Անսար ծայրայեղական շարժումին բաժնուած է եւ կապ ունի շատ մը ոճիրներու եւ պայթուումներու հետ, որոնց կարգին՝ նախարար Հըպէյթայի սպանութեան:

«Քիֆահ Արապի» այս առնչութեամբ գրած է, թէ երեք բանակայիններ սպանած Ապու Օպէյտայի ձեռքարկութիւնը պիտի իրականանայ կանաչակոյտեան ձայնով եւ կամ պիտուրական գործողութեամբ մը. պաղեստինցի ձեռքարկուած մը կը խոստովանի, որ Ապու Օպէյտա մասնակից էր նախարար Հըպէյթայի դէմ ակնաւորած ինքնաշարժի պատրաստութեան:

«Նահար» նշած է,

թէ երեք բանակայիններու սպանութիւնը կապ ունի «Քալիտա»ին հետ: Այնէլ Հըլուէի գաղթականը ամբողջութեամբ փակելու սպանալիքը անկայ է, իսկ Արաքսի կը սպասէ իրանացեան կառավարութեան՝ գործակցութեան համար:

Լիբանանեան քաղաքական գետնի վրայ տիրող կացութեան մասին «Լիուա» գրած է, թէ նախարարաց խորհուրդի որոշումներէն 24 ժամ տեք, իշխանաւորներուն միջեւ տարակարծութիւնները ի յայտ եկան քեյջայիի հարցով. վարչապետ Հաբիբի եւ նախարար Բըրտահի տարբերակներով կը մեկնաբանեն քեյջայիի հարցին լուծման գծով պետութեան որդեգրելիք գործընթացը:

«Քիֆահ Արապի»ի համաձայն, վարչապետ Հաբիբի կը յայտարարէ, որ նախարար Պաշար Ասատի իշխանութեան օրով Թաէֆի համաձայնագիրի 97 առ հարիւր գործադրուեցաւ:

«Տիար» նշած է, թէ իսրայէլեան բանակի ձայնասփիւղը յայտարարած է, թէ Հըպէյթայի եւ Իսրայէլ շուտով լուծում մը պիտի գտնեն գերիներու հարցին: Թերթին համաձայն, վարչապետ Հաբիբի նախարարաց խորհուրդի որոշումներէն հապի 24 ժամ

տեք, քեյջայիի հարցով տրուած որոշումներուն հակասող յայտարարութիւններ կատարեց:

«Սաֆիր» գրած է, թէ կատարուած միջնորդութիւններուն շնորհիւ, Հըպէյթայի եւ Ամալի պատասխանատուները պիտի տեսակցին վարչապետ Հաբիբիի հետ՝ Ուպայի կամուրջի հարցով: Ընդհանրապէս շրջանի բարգաւաճման ծրագիրները քննելու համար:

«Անուար» օրաթերթը իր առաջին էջով գրած է. «Սէնտի Թուրքի Պըն Թալալ, Նոյնիքն իրանացի Ուպայի Ռիտա Սալէին է. Լիբանան քաղաքացիներու «արտակարգ»ին եւ կառավարութիւններու դեկավարներուն «նեւրածման» միջեւ»:

Միջազգային լուրերու կարգին, թերթերը նշած են, թէ Ֆուլպոլի դաշտի մը տարածութիւնը ունեցող փոքր կղզիի մը շուրջ ծագած վէճը կրնայ Սպանիոյ եւ Մարոքի միջեւ պինդ տրակաւ քախուծի առաջնորդել: Թերթերը նաեւ անդրադարձած են Մարոքի թագաւորին ամուսնուրած եւ այդ առիթով եղած ժողովրդային հանդիսութիւններուն: Պաղեստինեան հարցին գծով անոնք նշած են, թէ Փաուրը շուտով, թէ պիտի չգործակցի Արաքսիի հետ, իսկ Պէն Էլիսպար

Ապար երկուշաբթի պիտի տեսակցի Սուպարաքի հետ:

«Սաֆիր» օրաթերթը մարպակաւ բաժնետիրու իրատարակած է հարցապրոց մը երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովանեանի հետ՝ ընդհանրապէս Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան մասին: Ան խոսեց Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան մէջ թափ առնէ պետք եղածին պէս. ես կը փորձեմ արգելքներ դնել սեւտիքաներու կազմութեան մէջ քաղաքական անձնաւորութիւններու «ներդրումը» կատարելու համար: Ան նաեւ նշած է, թէ նախարար Սիւհորա նախարարութեան գործունէութիւնը կը խանգարէ պիտուեղով նախատեսուած գումարները ժամանակին չփոխանցելով:

Ամբողջ էջով մը թերթը ներկայացուցած է նախարարութեան դիմաց ծառայող դժուարութիւնները, կանոնք դիմագրաւելու համար տարած ճիգերը եւ այլ մանրամասնութիւններ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

12էն 14 Յուլիսին, ԼՕՒԻ «Արաքսի Պուլճուրճեան» ընկերաբժշկական կեդրոնին մէջ կայացաւ ԼՕՒԻ պատգամաւորական 47րդ ժողովը, որուն ընթացքին կարդացուեցաւ Երջանային վարչութեան 2000 - 2002 երկամեայ գործունէութեան տեղեկագիրը, քննարկուեցան առկայ հարցերը եւ նոր առաջարկներ ներկայացուցան:

Ժողովի աւարտին ընտրուեցաւ 11 անդամ հաշուող նոր Երջանային վարչութիւնը, որ կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

Սեդա Խուրշեան
Թագուհի Ատայեան
Մէյրի Արեւեան
Չարուհի Գալէմբերեան
Ծովիկ Ալեքսանտրեան
Թալին Գըլպաշեան
Մարալ Գնտոյեան
Սուսի Պարսումեան
Սեդա Պիլէմեան
Արփի Չարայեան
Վարդուհի Տէվլեյեան

Փոխ անդամներ
Աստղիկ Սարաֆեան
Սիլվա Մահտեսեան

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉԻ ԾՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Մ. եւ Հ. Արայանեան ձեւարանէն ֆրանսական պաքայօրէպի լազողած աշակերտներու անուանացանկէն վրիպումով դուրս մնացած են գիտական ճիւղէն՝ Յովսէփեան Ուոի. Տէր Թորոսեան Շանթ եւ Սիւմպիլեան Բաֆֆի:

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Աստուածահաճոյ ազգասիրական արարք մը՝

Ըոգալ տարուան 365 Օրերէն Օրուան մը Ծերանոցի կեսօրուան ճաշի ծախսը 300 ամեր. տողար

Նուիրատուներ կրնան դիմել ԸԱՇԼԻ տնօրէնութեան: Ծերանոցի հեռ. քիւնթ՝ 01-260533, 01-266822 եւ 260534:

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԾՐԱՊՊՈՅՏՆԵՐ ՊԱՏՏԱԿԱՆ ԸԱՅԱՍՏԱՆ

Վան - Մուշ - Անի
Աղբամար - Կարս - Արարատ...

\$985 (Full Board)

Օգոստոս 23 - Սեպտեմբեր 1 (10 օր)

Ձեր տեղերը ապահովելու համար դիմել հեռ. 01-562044-5 01-562870-1

ANSER TOURS

Աւետիս Գալիարեան, հեռ. 03-283347

ԵՐԹԵՒԵԿԸ ՕԳՆԱԿԵՐՈՎ

The Revolutionary Japanese Air Conditioners

DYNAMIC made in Japan

I like it Powerful Ideal Cool DYNAMIC

- 9000 - 24000 B.T.U. HEAT PUMP SPLIT SYSTEMS
- EXCEPTIONALLY QUIET OPERATION
- LOW POWER CONSUMPTION, HIGH EFFICIENCY
- FULL LCD DISPLAY WIRELESS REMOTE CONTROLLED
- UNBEATABLE PRICES

GAS G. Ayanian & Sons
Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9
Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357

IGOL MOTOR OIL FUEL CARD

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 քիւնթ:

Յոյր Մահու Կլանակ

ԿԱՐԵԼԻ՞ Է ՏԱՂԱՆԴԸ ՊԱՀՊԱՆԵԼ ՍԱՌՈՅՅԻ ՄԷ՞Ջ

«ՏԸ ՈՒԱՃԻՆԿՈՐԸ ՓՈՍԹ» ԹԵՐԹԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՎԵՃԻ ՄԸ ԸՆԴՄԵՋԵՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵ ԿԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՆԵԼՈՒ ՅՈՅՍՈՎ ՄԵՌԵԼՆԵՐԸ ՍԱՌԵՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԸ «ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԸ»

Թէտ Ուիլիամսը մահէն քանի մը ժամ ետք անոր մարմինը վերցնուեցաւ Ֆլորիտայի դիտարանէն եւ տեղափոխուեցաւ Արիզոնա, ուր անոր ընտանիքի անդամներն ու մահէ զաւակը դասաւորած էին, որ պէսպառի հակային արիւնը քամուէր եւ փոխարինուէր սառեցնող բաղադրուածքով մը, ապա գետեղուէր աներեւակայնիօրէն պաղ բորակածինով լեցուն սնտուկի մը մէջ:

Ուիլիամսը մահէն ետք անոր մարմինը տեղ մը ամփոփելու հարցը բուռն վեճի նիւթ դարձած էր քանոր գաւակներուն միջեւ: Անիկա ահաւոր բարեւոյց մը ստեղծած է գիտութեան նորագոյն ճակատին եւ ընտանեկան աւանդական անհամաձայնութիւններու միջեւ, բարոյական, գիտական եւ իրաւական հարցեր յարուցանելով: Ուիլիամսը կտակը թերեւս պիտի կարենայ լուծել այն հարցը, թէ արդեօք անոր մարմինը պէտք է հարցնուի, դիակիզուի, թէ սառած մնայ: Կ'ականկալուի, որ անոր կալուածներուն պատասխանատուն անոր կտակը հրապարակէ Երեքշաբթի կամ Չորեքշաբթի օր, Ֆլորիտայի մէջ:

Ուիլիամսը 19 տարի խաղցած է Պոթրն Ռէտ Ֆոքս խումբին հետ: Յարդ ան ամէնէն հուշակալոր անձն է, որուն մարմինը կը պահպանուի սառույցի մէջ: «Ալլոպր Լայվ» էքսքիզիշն Ֆաուլուէրը ամ ֆ Սքարքուէլը ընկերութիւնը, որուն քով կը գտնուի անոր մարմինը, համացանցի իր կայքին մէջ կը նշէ, թէ ցարդ 49 անձերու մարմինը նոյն ձեւով սառեցուած է: Միացեալ Նահանգներու տարածքին կրկնապատիկ թիւով մարմիններ պահպանուած են սառույցի մէջ եւ հազարաւոր ապրող մարդիկ արձանագրուած են տարբեր ընկերութիւններու քով, որոնք 28 հազար տղարէն 120 հազար կը գանձեն մարմին մը յետ մահու սառեցնելու համար:

Թէեւ Ուիլիամսը ընտանիքին անդամները հաստատում մը չեն կատարած անոր մարմինի վիճակին եւ գտնուած վայրին վերաբերեալ, սակայն մէկ բան յստակ է. հետզհետէ կ'աճի քրիստոնիստ անունով ճարտարաբուէստ մը, որուն ղեկավարները կը հաւատան, թէ սառեցուած մեռելներ կարելի է հալեցնել օր մը եւ ցարդ անծանօթ արհեստագիտութիւններ

րով կեանքի կոչել գանոնք՝ բուժելով անոնց հիւանդութիւնները եւ երիտասարդացնելով անոնց մարմինը:

Յարդ ոչ մէկ անչնչացած մարմին նոյնքան ցած ջերմաստիճանով սառեցուած է եւ հալեցնելէ ետք՝ ապրած, ինչ որ մարմին մը սառեցրնելու եւ վերակենդանացնելու գործընթացը կը պահէ երեւակայութեան ոլորտին մէջ: Ժամանակակից գիտութեան մէջ ոչինչ մտածել կուտայ, թէ նման բան կարելի է: Այսուհանդերձ Ուիլիամսը հաւանաբար պիտի միանայ տասնեակներով այլ մեռելներու, որոնք սառույցի մէջ պիտի պահպանուին եւ սառեցնող ընկերութիւններուն հազարաւոր տղար վճարած պիտի ըլլան անաղարտ պահպանուելու համար: Քինզադատներ կ'ըսեն, թէ մինչ ընկերութիւններ կը վաճառեն գերսառեցուած հեղուկներով լեցուն փողփողուն սնտուկներ եւ հին հիւանդութիւններու ապագայապաշտ դարձաններ, իրականութեան մէջ անոնք կը վաճառեն մարդկուլութեան ամէնէն հին յոյսը, թէ՛ կարելի է յաղթահարել մահը, շրջել տարիքի յառաջացումը եւ ետ տանիլ ժամանակը:

«Ասիկա խարբարութիւն է, կ'ըսէ Լոս Անճելեսի մէջ Սատրն Բալիֆորնիա համալսարանէն հոգեբանութեան դասախօս Հերման Ֆայֆէլը: Այս ընկերութիւնները կը կիսեն ժողովուրդը: Կ'ենթադրեմ, որ մարդկային յոյսը երբեք չի մեռնիր: Սակայն այս ակնկալութիւնը պատարանք է եւ երբեք իրականութիւն պիտի չդառնայ»:

Ուիլիամսը մահացաւ Յուլիոս Ծին, Ֆլորիտայի մէջ, 83 տարեկանին: Անոր առողջական վիճակը հետզհետէ կը վատթարանար վերջին տարիներուն: Ան կը տառապէր սրտի հիւանդութիւններէ եւ անոր տեսողութիւնը կը տկարանար:

Յարդ յայտնի չէ, թէ արդեօք Ուիլիամսը երբեքից փափաքած է սառեցուելի յետ մահու:

Անոր երէց աղջիկը՝ Պարպարա հրապարակած է եղբուլութիւնը, երբ իր խորթ եղբոր դէմ ուղղած է իր հօր մարմինը Արիզոնա փոխադրելու եւ սառեցնելու ամբաստանութիւնը:

Պարպարայի համաձայն, իր հայրը փափաքած է դիակիզուելի եւ ուզած է, որ իր աճիւնները սփռուին Ֆլորիտա Քիթի վրայ, գոր շատ կը սիրէր: Ան կը յայտարարէ, թէ Ուիլիամսը երրորդ ամուսնութենէն ծնած զաւակները՝ Ճան Հենրի եւ Քլորիս իրենց անձնական որոշումով դիմած են «Ալլոպր» ընկերութեան: Պարպարա կ'ըսէ, թէ այս միջոցառումը դէմ է իր հօր փափաքին եւ կը միտի իր հօր ծինական ժառանգութեան պատասխանատու ըլլըները վաճառել ապագային:

Մեռելներ սառեցնող այլ ընկերութեան մը՝ «Քրիստոնիս Ինքսիթիւք»ի տնօրէն կ'ըսէ, թէ այս արհեստագիտութեան ժողովրդականութիւնը հետզհետէ կը բարձրանայ: Ընկերութիւնը սառեցնուցած է (տնօրէնի բառերով՝ «առկարած է») 41 մեռելներ, գորս ան կը կոչէ «հիւանդներ»: Ան 1250 տղար գանձած է 400 ապրող անձերէ՝ զանոնք արձանագրելու համար ընկերութեան քով: Այս գումարը մեծ մասամբ վճարուած է ապահովագրական ընկերութիւններու կողմէ:

«Քրիստոնիս Ինքսիթիւք»ը կը պահանջէ, որ մահէն անմիջապէս ետք մեռեալին մարմինը ծրարուի սառույցի մէջ եւ փոխադրուի երկար ժամանակի համար սառեցնելու գործընթացը կիրարկող զբարան մը: Այնուհետեւ մեռեալին մարմինը արիւնքամ ընելէ ետք մասնագէտներ կ'լլիսթրիս պարունակող նիւթ մը կը ներարկեն անոր մէջ: Անոնք միաժամանակ մարմինը կը սառեցնեն պաղ օդով, սառով կամ փշրուած չոր սառով, որ կը բաղկանայ սառած երկթթուածին բնածուխէ (քարպոն տայոքսայտ):

Ապա մեռեալին մարմինը կը գետեղուի հե-

ղուկ բորակածինով լեցուն դիպապարկի մը մէջ, ուր կը պահուի տասնամեակներ շարունակ, մինչեւ որ գայն վերակենդանացնելու գիւտը գտնուի: «Քրիստոնիս Ինքսիթիւք»ի տնօրէնին համաձայն, գիտութիւնը պէտք է լուծէ լիսաւոր երեք հարցեր, որպէսզի մեռելները սառեցրնելու արհեստագիտութիւնը արդիւնաւորուի: Ան կ'ըսէ, թէ ամէնէն դուրինը մեռելները վերակենդանացնելն է: Աւելի դժուար է քաղցկեղի կամ մեռած անձին հիւանդութեան դարձմանը գտնելը, իսկ ամէնէն դժուարը պիտի ըլլայ ինքնին սառեցնելու գործողութեան պատճառած աւերը դարմանելը:

«Մեռելները հոգեբանական ցնցումէ կամ հիւանդութենէ տարբեր բան մը չէ: Անիկա պարզապէս կենսական գործընթացներու կասեցումն է, կ'ըսէ ան- Օրինակ, եթէ փոքր որդ մը սառեցուի եւ ապա հալեցուի, կը տեսնենք, թէ անիկա մեռած էր, երբ սառած էր, եւ վերակենդանացած՝ հալելէ ետք: Այլ խօսքով՝ մեռած էր, ապա՝ վերակենդանացած: Մէկը մը մեռնի, երբ սիրտը կը դադրի աշխատելը: Իսկ երբ նոր սիրտ մը դնենք անոր մարմնին մէջ, ան անմիջապէս կը վերակենդանանայ»:

Այդպէս չէ, կ'ըսեն բազմաթիւ գիտնականներ:

Թէեւ մարդկային հիւսկէնները կարելի է ապահով կերպով սառեցնել եւ հալեցնել, եւ մինչ այս գործընթացը յաճախ կը կիրարկուի սաղմեր, սերմեր եւ արեան պաշար պահելու համար, սակայն ամբողջ մարմին մը սառեցրնելն ու հալեցնելը կը նշանակէ պահպանել ոչ միայն ներքին գործարաններն ու հիւսկէնները, այլ նաեւ անոնց միջեւ կապերը եւ մարմնին ներքին հաւասարակշռութիւնը, որ կարելի կը դարձնէ կեանքը:

(ՅԱՊԱՒՈՒԱՄ)

ՄԱՆԸ՝ ՆԵՂՈՍԻ ԱՓԵՐՈՒՄ

«ՏԸ ՆԻՒ ԵՈՐԲ ԹԱՅԱՉ» ԿԸ ՆԿԱՐԱԳՐԵ ԹՈՒԹԱՆԱՍՈՒՆԻ ԳԱՆՁԵՐՈՒՄ ՆՈՒԻՐՈՒԹԱՅ ՑՈՒՑԱԿԱՆՂԵՍ ՄԸ, ՈՐ ԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ Կ'ԱՌՆԵ ԸՆԻ ԵԳԻՊՏԱՅԻՆԵՐՈՒՆ «ԱՆՍԱՐՈՒԹԵԱՆ ՓՆՏՈՏՈՒԹԸ»

Աւելի քան 25 տարի առաջ «Թուրքիան-Սամոնի գանձերը» վերնագրով ցուցահանդէս մը տեղի ունեցաւ Ուաշինկթոնի Արուեստի Ազգային պատկերասրահին մէջ եւ ճշգրեց այն չափանիշները, որոնց համաձայն՝ պէտք էր կազմակերպել ընկերանային նման իրադարձութիւն մը: Յուշահանդէսը կը պարփակէր զգայացունց արուեստ, գրաւիչ պատմութիւն (պատանի փարաւուն մը, հնագիտական յանդուգն հետազոտութիւն մը, գերեզմանէն արձակուած անձնք մը) եւ ծանուցումի մեծ արշաւ մը: Այսպէս արձանագրուեցաւ առեւտրական մեծ յաջողութիւն մը:

«Անմահութեան փնտռուիքը. գանձերի հնարքեան Եգիպտոսէն» անունով ցուցահանդէս մը, որուն բացումը կատարուեցաւ նոյն թանգարանին մէջ, յայտնապէս կը միտի իր նախորդին պէս նիւթական մեծ շահ ապահովել: Յոյսերը անհիմն չեն: Եգիպտոսէն բերած աւելի քան 100 առաջնակարգ իրեր պարունակող այս ցուցահանդէսը տեսողական զգայացունց իրադարձութիւն մըն է: Սակայն ժողովրդականութեան առումով՝ եգիպտական արուեստը միշտ լաւ արդիւնք կ'արձանագրէ: Անիկա տպաւորապաշտ արուեստին պէս մեծ թիւով այցելուներ կը ներգրաւէ: Պատճառները բազմաթիւ են. անոնցմէ մէկը այն է, թէ եգիպտական արուեստը միաժամանակ արեւմտեան եւ ոչ արեւմտեան, տարաշխարհիկ եւ ծանօթ, ափրիկեան, սակայն միջերկրականեան յատկանիշներ կը կրէ:

Եգիպտական արուեստը անմիջապէս ճանաչելի է. նրբաշխատ, թանկագին եւ սուղ. յատկանիշներ, գորս արեւմուտքից կ'առնչեն «գերագաս» մշակոյթներու հետ: Իրօք, եգիպտական կարգ մը պատկերներ երեւակայածին, նոյնիսկ տարաշխարհիկ կը թուին, ինչպէս՝ մարդկային մարմնով եւ անասունի զուգործակալ ստուածներու կերպարներ: Սակայն մեծամասնութիւնը «մեզի» նման է կամ առնուազն մեր արտերկրացի տարբերակը: Իրօք, կարելի է մտածել, թէ այս արուեստը կերտողները կը բաժնէին մեր կարգ մը արժեքները, որովհետեւ կը գտնուէին ոգեղէն նոյն ոլորտներուն մէջ: Կը թուի, թէ անոնք մեզի պէս նիւթապաշտութիւնը վերածած են կրօնի: Սակայն, թէեւ անոնց յաւիտենական տեսլականը լատատեան տեսլականն էր, սակայն անիկա նաեւ կ'արտակը թուի ըլլալ, սակայն անիկա նաեւ կ'արտացոլէ նոյն սարսափը, որ մովսէսի սակաւ-քրիստոնէական մշակոյթը կը զրսեւորէ Ֆիզիքական փոստի եւ բնաշնչումի նկատմամբ:


Ժողովրդային մակարդակի վրայ ասիկա կը թարգմանուի խորհրդապատկերութեան եւ ոգիներու աշխարհով, ինչ որ եգիպտական բոլոր բաները գրաւիչ կը դարձնէ պատանիներու եւ Հորիզոնի համար: Կասկած չկայ, թէ մահը մեծ ճարտարար-

ուեստ մը կ'ընձեռէր Հին Եգիպտոսի մէջ: Յարդ պոստուեւած եգիպտական ամբողջ արուեստը հիւսուած է մահուան շուրջ: Ընկերութեան առանձնաշնորհները կեանքէն դէպի անդենական անցումը կը պատկերացնէին իրեւ պերճանաւով փառաւոր շրջապոստ մը ոգեղի յաւիտենութիւն, պահպանող ոգիներէ բաղկացած անձնակազմի մը առաջնորդութեամբ:

Իրօք, պատկերասրահին մուտքին առաջին ցուցանմուշը նաեւ կ'ընէ, յայտնաբերուած՝ Եգիպտոսի 18րդ թագաւորութեան փարաւուն Ամենհոթէպ Բ-ի դամբարանէն (իշխած է Ն. Ք. 1427էն 1400): Անիկա նմուշ մըն է թագաւորական այն մահուանիշներէն, որոնք կը նաւարկէին Նեղոսի վրայ: Նաւակի վրայ վրայ գծուած պատկերները կը շփոթեն Եգիպտոսի կերպարական զօրութիւնը: Անոնք կը պատկերեն աստուածի մը կերպարանքը, որ թշնամիներ պարտութեան կը մատնէ Նուպիոյ եւ Սուրիոյ մէջ. տարածքներ, որոնք կը գտնուէին Հին Եգիպտոսի իշխանութեան տակ:



Եգիպտական արուեստը կը բովանդակէ երկնային եւ մարդկային յատկանիշներու մէկատեղում մը, ինչ որ կ'ապացուցէ, թէ այս մշակոյթը գոյութեան հիւսուածութիւնը կը մեկնաբանէ իրեն երկրայինութիւններու խաղ մը: Տարբեր պարունակներու մէջ իրական մարդիկ կը պատկերուին անթերի աստուածութիւններու պէս կամ կը ներկայացուին իրեն առանձնատիպարներ, երբեմն նաեւ՝ երկուքը միաժամանակ, ինչպէս ակնհայտ է թաղման յատուկ ոսկեայ դիմակի մը վրայ, որ շինուած է թագաւորական պալատին մէջ ծառայող պատասխանատուի մը համար: Երիտասարդի դիմապատկերով, իւրաքանչիւր պատկեր մը կը ներկայացընէ, իսկ գործածուած լուսափայլ մետաղը կ'ապացուցէ, թէ զայն կրող անձը գերմարդկային դիրքի արժանացած էր: Այս դիմակը, որ մութին մէջ կ'ախտուած է, այցելուին կ'առաջնորդէ դէպի պատկերասրահներ՝ նուիրուած



Դիմակ մը եւ մանեակ մը «Անմահութեան փնտռուիք» ցուցահանդէսէն

թագաւորական եւ ազնուական դասակարգի դամբարաններէն յայտնաբերուած իրերու: Անոնց շարքին են գարմանահար զանազան սրուակներ, մանուկներու համար շինուած թաղման աթոռներ եւ մարդկային կերպարանքով շինուած դազաղի կափարիչներ: Պատկերասրահին մէջ բաժին մը նուիրուած է ճարտարապետ եւ ճարտարագէտ Սենեթէմի, որ իր արհեստին վերաբերող գործիքներով եւ իր բազմաթիւ զաւակներուն հետ թաղուած է այժմու Տէյր էլ Մետինէ շրջանին մօտ: Անոր զակին՝ Խոն-սուի դամբարանը կը դերձուի սենեակին մէջ: Խոնը եւ քառանկիւն կառոյցով այս դամբարանի վրայ գծուած են «Մեռելներու գիրք»ին մէջ նկարագրուած յետ մահու կեանքի խորհրդարան մէջ նկարագրուած յետ մահու կեանքի խորհրդարան մէջ: Անոնք կը պատկերեն թաղուած անձը գմուխով գործընթացը: Այլ պատկերի մը մէջ մեռեալը ծունկի եկած է երկու առիւծներու առջեւ, որոնք կը խորհրդանշեն երկը եւ այսօրը, մարմնաւորելով անդենականի մէջ ժամանակի հասկանալիութիւնը ընտրող պարբերաշրջաններու թաւալումը:

Այս պատկերները կը պատմեն մշտնջենական վերածնունդի հոլովոյթի մը մասին, որ նկարագրուած է ոչ միայն յուղարկաւորութեան յատուկ գրութիւններու մէջ, այլ նաեւ խտացած է որոշ պատկերներու մէջ, ինչպէս՝ ստորերկրեայ աշխարհի եւ մեռելներու դատաւոր Օգիրիս աստուծոյն քաղի արձաններով: Օգիրիս սպաննուած եւ անդամահատուած է, ապա կեանքի բերուած: Քանակը գայն կը պատկերէ մահէն յարուցելու անցումի պահուն: Անոր մոմիայի ձեւով մարմինը ոլորուած է թրթուրի մը պէս, որ կարծէք պիտի ճեղքէ իր պատանքը: Դէմքը, որ արդէն դուրս եկած է, ինքնապատահ ժպիտով մը կը ճառագայթէ: Ան

պառկած է արտասովոր դիրքով, փորին վրայ, եւ կը թուի, թէ այդ դիրքը որդեգրած է թուրու պատրաստուելու համար: Հին եգիպտացիները Օգիրիսի ապրած մահուան եւ կեանքի պարբերաշրջանը կը տեսնէին գիշերուան եւ ցերեկուան թաւալումին մէջ, եղանակներու յաջորդականութեան, իշխանաւորներու յայտնութեան ու անկումին եւ անշուշտ անհաստական կեանքի: Անիկա նաեւ կը մարմնաւորէր յետ մահու կեանքի կառոյթը, որ նկարագրուած է յուղարկաւորութեան յատուկ ուղեղոյցներու մէջ, որոնց շարքին ամէնէն վերամբարձր կը համարուի «Ամտուար»ը կամ «Մահուան աշխարհից գիրքը»:

Սկիզբը բացառաբար թագաւորական ընտանիքին վերապահուած այս գիրքը ժամ առ ժամ կը նկարագրէ մեռած փարաւունին ամէն-նօրեայ գիշերային ուղեւորութիւնը խաւարէն լոյս: Արեւ աստուած Ռայի նաեւ կը թիպարելով՝ փարաւունը կ'իջնէ ստորերկրեայ աշխարհ, յաջողութեամբ կը դիմագրաւէ տագնապալի դժուարութիւններ եւ ամէն արշալոյսին կը վերածնի յաղթանակ: Սովորաբար պատկերուած «Ամտուար»ը նաեւ արձանագրուած է որմանկարներու մէջ, դամբարաններու պատերուն վրայ: Յարդ գոյաթուրուող ամէնէն հին նմուշը շարժուն գծանկարներու ոճով պատկերուած է Թուլթուսէ Գ. փարաւունին թաղման սենեակին պատերուն վրայ: Յուշահանդէսը կազմակերպողները, Ազգային Պատկերասրահը եւ Քոֆէնհակընի մէջ «Եուրոպրտ Եգիպտիք կրուփ» ընկերութիւնը թուրքական ընկերութեան մը ապսպրուած են թուլթուսի որմանկարներու թուական (տիքիթը) վերարտադրութիւնը, որ ցուցահանդէսին աւարտը կը նշէ թատերականութեամբ՝ յատուկ նիւթի մը նուիրուած զօսապալի մը մէջ պտտելու տպաւորութիւնը առթելով:

Յաւալի է, որ ցուցահանդէսը կազմակերպողները յաւելեալ ճիշդ չեն թափած աւելի խոր թափանցելու նման խորհրդաւոր նիւթի մը եւ զաղափարներու մէջ: Փոխաբանէ՛ք՝ անոնք մէկտեղած են հնարարեան արուեստի ընդունուած տեսակէտներ, որոնք վաղուց վերածուած են արդի սովորաբար թուլթուսի: Վստահաբար գոյութիւն ունի հնարարեան Եգիպտոս մը, որ ցարդ չէ յայտնաբերուած եւ կը պարունակէ անակնկալներ ու թարմ գեղեցկութիւններ: Սակայն Եգիպտոսը, որ կը տեսնենք այստեղ, այն Եգիպտոսն է, որ միշտ ճանչցած ենք եւ միշտ խառն զգացումներ ունեցած՝ անոր նկատմամբ: Անիկա բունատիրական վարչակարգով, մենատիրական գաղափարաբանութեամբ եւ փառահայտ արուեստով յատկանշուած Եգիպտոսն է:

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

Տ Ր Ե Չ Ե Ն Տ Օ

Շարունակում՝ 6րդ էջին

յի առաջին որմանկարից երեւում է, թէ ինչպէս էր ձիթթնով մեկնարանում բնութիւնը: Մինչեւ այսօր դեռ կարելի է տեսնել Ասիգրի հրապարակի վրայ Միներվայից նուիրում հռոմեական տաճարը, որ եկեղեցու է փոխուած, բայց որի արտաքինը մնացել է անփոփոխ: Կէօթէն, ի միջի այլոց որ արհամարհում էր քրիստոնեայ եկեղեցիները, այդ եկեղեցին այցելեց, իր առաջին իտալիա ճամբորդութեան ժամանակ, որովհետեւ հռոմէական էր եւ որի առջեւ բացահայտեց Ձօ Կանց: Ահա այդ տաճարը ձիթթնով զրել է իր նկարի կենտրոնում, սակայն նա նրան վեր է ածել այդպէս կոչուած մարմորարիների ոճին, նուագեցրել է սիւների թիւը, որպէսզի աւելի ուղղադիր դարձնէր, նկարը զարդարել է եռանկյունի խճանկարներով, ծածկել է գոթական օկուլուսով եւ շուրջը դրել է հրեշտակներ: Ահա ուրեմն դասական կառուցուածքը վերածուած քրիստոնէականի: Մօտը, ինչպէս այսօր, կանգնած է քաղաքապետական շէնքը իր գեղեցիկ պատուհաններով եւ իր աղիւսէ աշտարակով: Մօտի միւս տները պատըզգամներ ունեն, ինչպէս Պոմպէյեան շէնքերը կամ ինչպէս հայ կամ բիւզանդական մանրանկարչութեան մէջ տեսնուած տները: Այդ տեսարանները ամէն մի նոր նկարի մէջ փոխուում են եւ բազմաճյուղ: Այդպէս Տրոյկարում Քրիստոս ցոյց է տալիս քնած սրբին տա-

րօրից, պուրրիկանը ման շէնքերի, որոնց առջեւ բացուում են լայն եւ տարօրինակ պատշգամներ: Նուագ հետաքրքրական է Սուլթանի պալատը 11րդ նկարում: Այդ կառուցուածքները, ուր յաճախ նա ներկայացրել է յայտնի եկեղեցիներ, դրսից կամ ներսից, միշտ որոշ նմանութիւն ունեն իրական շէնքերի հետ, որ նա փոխում է ըստ իր պահանջներին: ձիթթնով զարմանալի կերպով ըմբռնում է Ումպրիայի դաշտակարը, որ նա ներկայացրել է ճշգրիտ եւ նուրբ հասկացողութեամբ: Այդ գեղեցիկ բլուրները, որոնց վրայ տնկուած են ձիթթնիներ, ու որոնց կատարներին ցցուած են վանքեր եւ զանգակատներ, այդ պարզ, լերկ ժայռերը, այդ դալար մեկնակութիւնները, ուր սուրբը խօսում է թռչուններին, նա լաւ է ճանաչում եւ կարողանում է մեզ մասնակից անել նրա բոլոր գեղեցկութիւններին: Այդ նկարների մէջ ձիթթնով կենտրոնացրել է ամբողջ իր յուզումը սրբի դէմքի վրայ: Վերցնելով սրբի կեանքից ամենակարեւոր տեսարանները, նա նրանց ներշնչել է մեծ տրամաթիքական կարողութիւն եւ մեծ յուզում: Այլեւս այդ բոլոր տիպարները, որ նա նկարում է, պարզ սիւնէրներ չեն, այլ շարժման մէջ դրուած արձաններ են, որոնց ռեալիստիկ դուրս է ցատկուած եւ մի առանձին կենսունակութիւն տալիս նրանց: Ան-

շուշտ դեռ հեռանկարը նրան լաւ ծանօթ է եւ իր տիպարները տարածութեան մէջ տեղադրելու ժամանակ զգում է ստատամասնքը, անորոշութիւնը, որոնումը, փորձը եւ յանգնութիւնը: Չափերի համեմատութիւնները մէկ փունջի միջոցով, հեռաւորութիւնների անորոշ տեղադրումները չեն խանգարում սակայն, որ կարեւոր մասերը իր ուզածը նման դուրս ցատկեն: Եւ երբ նա ուզում է արտայայտել մի դէպք կամ մի յուզում շարժման միջոցով նա դուրս է նետում դպրոցի բոլոր աւանդութիւնները եւ դիմում է ուղղակի բնութեան: Նա ընտրում է ճշմարիտ ծեսը, որ համադրում է իր հոգեկան վիճակը: Ողորմութեան ծեսը, որով սուրբը տալիս է իր վերակարգութեան ծեսը Սան Տամիան խաչի առջեւ, հայրական քաղցրութիւնը, նրա քարոզի վայրկեանը՝ ուղղուած թռչուններին, այդ ամէնը տրուած է մի նկարիչի կողմից, որ փնտէրի տեղ, տեսնել եւ որ ներկայանում է մեր դարաշրջանի առաջին նկարչին:

Այդ Ասիգրեան նկարների մէջ կան անշուշտ մեծ տարբերութիւններ: Ոչ ամէնքը ներկայանում են մեզ հաւասար արժէքով: Ոճի եւ յօրինման մեծ տարբերութիւններ են կան: Ֆրանչեսքոյի որ առաջին նկարների մէջ ներկայացուած է առանց մօրուքի, աւելի վերջին նկարներում մօրուքաւոր է: Միջին նկարներում եւս շատ տարբերութիւններ կան, որոնք մտածել են տալիս, որ ընդհատուած տեղի ունեցած է, որ ձիթթնով մեկնած է ու վերադարձած է եւ այլն: Քսան տարի յետոյ, Սանթա Քրոչի մի մատուռի համար ձիթթնով պիտի վերանկարէր վերջին վերջնական ձեւ տալով նրանց - այդ որմանկարներից մի քանիսը: Սակայն, չնայած իր տաղանդի հասունեանալուն, իր ձեռք բերած վարպետութեան, նա պիտի չի գերազանցի յոյզի մեզ լեցնում է Ասիգրի որմանկարները դիտելու ժամանակ: Այն անմիջականութիւնը, այն թարմութիւնը, որ դեռ ներկայ է Աղբարտի եկեղեցու, բացակայ են Ֆրոնտոնում, ուր ներկայ է վարպետի, գիտունի ձեռքը: Սուրբ Ֆրանչեսքոյի ամենամեծ դերը կարելի է համարել նրա մէջ, որ հեռու արուեստի մասին գոյություն ունեցող օրէնքներից, կանոններից, պարտադրութիւններից, նա կարողացաւ պարզ գոյացումի, անմեղ հաւատքի, անկեղծ մանկական թարմութեան միջոցով առաջ բերել այդպիսի նկարչութիւն, որի հետեւանքը մինչեւ այսօր դեռ զգացում է:

ՕՐԱՏԵՐ

ՓԱՌԱՏՈՐ / ՅՈՒՆԻՍ ԵՄԻՍԻՍ / ԶԲՕՍԱՆՔՐՈՒԹԻՒՆ

